Արձանագրություն N 3

«ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

16 մայիսի 2017թ.
ժամը 11:00

Հանձնաժողովի՝
նախագահ՝ Ա. Ղարիբյան
անդամներ՝ Ա.Մարգարյան, Ս. Վարդանյան
քարտուղար՝ Ա. Մակարյան

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-52/17 բողոքը քննող հանձնաժողովի <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի հիման վրա բողոքը բավարարելու վերաբերյալ կայացրած որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց <<ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժ.10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը համարել չկայացած:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթը կազմակերպվել էր ԲԸԱՀ ընթացակարգով, այսինքն 105-Ն որոշման 25-րդ կետի, 6-րդ ենթակետի գ/ պարբերության հիման վրա, որի կիրառման դեպքում պայմանագրի կատարման արդյունքը ամբողջ ծավալով պետք է ընդունվեր և կատարվեր տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում և ֆինանսական միջոցները պետք է հատկացվեին կնքված պայմանագրի հիման վրա, սակայն <<Իմպերիալ Տուր>> ՍՊԸ-ի կողմից թեժ գծին ստացված ահազանգի միջոցով գործընթացը դադարեցնելու, այնուհետև <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի հիման վրա բողոքորկման փուլի անցնելու և գործընթացը ձգձգվելու պատճառով (մեկ ամսից ավել) գնման պահանջը վերացել է:

3.Հիմք ընդունելով ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետը՝ հանձնաժողովը որոշում կայացրեց գնման ընթացակարգը համարել չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղարիբյան

Անդամներ Ա.Մարգարյան

Ս. Վարդանյան

Քարտուղար՝ Ա. Մակարյան